ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Վերոնա ՍՊԸ-ն ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/37 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	ֆիրմային անվանումը	տեխնիկական բնութագիրը
56	1.Ձելանդական ,2. Anchor	Ձելանդական կամ Anchor: Բարձր որակի, ոչ աղի սերուցքային կարագ՝ պատրաստված բացառապես կովի կաթից ստացված պաստերիզացված սերուցքից: Հիմնական ցուցանիշները՝ 100 գ արտադրանքի հաշվով. կաթնային ճարպ՝ ոչ պակաս, քան 82.9%, խոնավություն՝ ոչ ավելի, քան 15.7%, սպիտակուց՝ ոչ ավելի, քան 0.7 գ,ածխաջրեր՝ ոչ ավելի, քան 0.7 գ, էներգետիկ արժեք՝ մոտ 740 կկալ/100 գ: Արտադրանքը չպետք է պարունակի բուսական ճարպեր, կաթնային ճարպի փոխարինիչներ, մարգարին, կոնսերվանտներ, արհեստական գունանյութեր և բուրավետիչներ: Համն ու հոտը պետք է լինեն մաքուր՝ բնական սերուցքային կարագին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Փաթեթավորումը՝ գործարանային, ամբողջական, փակված և չվնասված, սննդամթերքի հետ շփման համար թույլատրելի նյութից: Զտաքաշը՝ 25 կգ մեկ փաթեթում: Փաթեթի վրա պետք է նշված լինեն արտադրանքի անվանումը, արտադրողի տվյալները, բաղադրությունը, կաթնային ճարպի տոկոսը, զտաքաշը, արտադրության ամսաթիվը, պիտանելիության ժամկետը, պահպանման պայմանները և խմբաքանակի նույնականացման տվյալները: Արտադրանքի որակական ցուցանիշները պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 32261-2013 «Կարագ. Տեխնիկական պայմաններ» ստանդարտի կամ համարժեք միջազգային/ազգային ստանդարտի կամ արտադրողի հաստատված

		տեխնիկական մասնագրի (Specification) պահանջներին՝ պայմանով, որ ցուցանիշները չեն զիջում սույն տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին: Անվտանգությունը և մակնշումը պետք է համապատասխանեն ՄՄ ՏԿ 021/2011, ՄՄ ՏԿ 022/2011, ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգերի և ՀՀ-ում կիրառելի սննդամթերքի անվտանգության օրենսդրության պահանջներին: Արտադրողի կողմից սահմանված ընդհանուր պիտանելիության ժամկետը՝ առնվազն 12 ամիս՝ համապատասխան պահպանման պայմաններում: Մատակարարումը՝ շաբաթական մեկ անգամ, պատվիրատուի փաստացի պահանջարկին համապատասխան՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2027 թվականի մայիսը ներառյալ: Մատակարարման և տեղափոխման ընթացքում պետք է պահպանվեն արտադրողի սահմանած ջերմաստիճանային ռեժիմը և սննդամթերքի անվտանգության պահանջները:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Верона ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-26/37 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	фирменное наименование	технические характеристики
56		